ՄԱՄՈՒԼ

Վիէննայի «Հանդէս Ամսօրեայի» սեպտեմբերի համարը, որ երէկ ստացանք, խօսելով հայ տպագրութեան 400 ամեակի տօնախմբութեան մասին, այն կարծիքն է յայտնում, թէ որովհետև տօնախմբութիւնը կատարվելու է Էջմիածնում և Էջմիածնի Ցանձնաժողովը որոշել է ստեղծել «դպրոցական ֆոնդ» և ոչ «գրական ֆոնդ», ուստի տօնը լինելու է ոչ թէ համազգային, այլ դաւանաբանական և դրանով յօբելեանի մասնակցութիւնից պէտք է զրկվեն թէ հայ-կաթոլիկները և թէ հայ-բողոքականները և մանաւանդ Մխիթարեան երկու Միաբանութիւնները։

Ցայտնելով այս միտքը, «Հանդէս Ամսօրեան» ցաւ է յայտնում, որ «Մշակի» պէս թերթը ջատագով է հանդիսանում Էջմիածնի ծրագրին։